22 սեպտեմբերի 2014 թ. N 612-Ա

ք. Ստեփանակերտ

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014 թվականին կարկտահարությունից, երաշտից, սելավներից (այսուհետ՝ բնական աղետ) տուժած խաղողայգիների տերերին և աշնանացան մշակաբույսերի ցանքատերերին (համատեղ հողօգտագործողներ) պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. 2014 թվականին բնական աղետներից 100 տոկոսով տուժած խաղողայգիների տերերին յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով պետական աջակցություն:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված պետական աջակցության գործընթացն իրականացնելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանների վարչակազմերին հատկացնել 10 791 000 (տասը միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Սահմանել, որ 2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների (այսուհետ՝ համայնքներ) վարչական սահմաններում գտնվող աշնանացան մշակաբույսերի հողատարածքների մեկ տարվա հողի հարկի և վարձակալության դիմաց հաշվարկվող և համայնքների բյուջե վճարման ենթակա տարեկան գումարները ենթակա են վճարման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված վճարման համար հիմք են հանդիսանում սույն որոշման N 2 և N 3 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան

կազմված, համայնքների ավագանիների կողմից հաստատված և համայնքների ղեկավարների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանների վարչակազմեր (այսուհետ՝ շրջանների վարչակազմեր) ներկայացված ցուցակները:

5. Շրջանների վարչակազմերին՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը ընդհանրացնել համայնքներից ստացված տեղեկությունները ու ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ սույն որոշման 3-րդ կետով սահմանված վճարման գործընթացն իրականացնելու համար:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ սույն որոշման 5-րդ կետով սահմանված տեղեկություններն ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանների վարչակազմերին համայնքների բյուջեներ վճարման ենթակա գումարները հատկացնելու վերաբերյալ:

7. Շրջանների վարչակազմերին՝

1) սույն որոշման 2-րդ կետին համապատասխան հատկացված գումարները բաշխել 2014 թվականին բնական աղետներից տուժած խաղողայգիների տերերին.

2) սույն որոշման 6-րդ կետին համապատասխան հատկացված գումարները փոխանցել համայնքների բյուջեներ՝ համաձայն սույն որոշման N 2 և N 3 հավելվածներով սահմանված ձևով ներկայացված ցուցակների:

8.Սահմանել, որ 2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողատարածքների աշնանացան հացահատիկ մշակող հողօգտագործողներն ազատվում են մեկ տարվա հողերի վարձակալության դիմաց հաշվարկվող և պետական բյուջե վճարման ենթակա վարձավճարից:

9.Սույն որոշման 7-րդ կետով սահմանված գումարները բաշխելու նկատմամբ վերահսկողությունը դնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության վրա:

10.Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված ցուցակում ընդգրկված՝ 2014 թվականին բնական աղետներից տուժած հողօգտագործողներին, ինչպես նաև 2014 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ բոլոր հողօգտագործողներին փոխառության պայմանագրերից բխող պարտավորությունների մարումը երկարաձգել մինչև յոթ տարի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան մարելու պայմանով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի սեպտեմբերի 22-ի
N 612-Ա որոշման

Ց Ա Ն Կ

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԽԱՂՈՂԱՅԳԻՆԵՐԻ ՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հ/հ	*Համայնք*	*Ընդամենը (հեկտար)*	*Ընդամենը գումարը (դրամ)*
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջան			
1	Նորագյուղ	3.83	383000
2	Սարուշեն	1.0	100000
Ընդամենը շրջանում		***4.83***	***483 000***
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջան			
1	Ղուզե Ճարտար	5.0	500000
2	Քերթ	1.58	158000
3	Ջիվանի	1.0	100000
4	Քարահունջ	6.38	638000
5	Սարգսաշեն	9.0	900000
6	Թաղավարդ	7.8	780000
7	Կարմիր Շուկա	2.0	200000
8	Սոս	66.32	6632000
9	Պետական պահուստային ֆոնդ	4.0	400000
Ընդամենը շրջանում		***103.08***	***10 308 000***
ԸՆԴԱՄԵՆԸ		***107.91***	***10 791 000***

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի սեպտեմբերի 22-ի
N 612-Ա որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
_____ ՇՐՋԱՆԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ
ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN	Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը կամ իրավաբանական անձի անվանումը	Ֆիզիկական անձի սոցքարտի և (կամ) անձնագրի համարը, կամ իրավաբանական անձի ՀՎՀՀ-ն	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի չափը (հեկտար)	Հողի հարկը (դրամ) 2014թ.
1.					
2.					
3.					
	Ընդամենը				

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
_____ շրջանի _____ համայնքի
ղեկավար _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի սեպտեմբերի 22-ի
N 612-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
_____ ՇՐՋԱՆԻ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN	Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը կամ իրավաբանական անձի անվանումը	Ֆիզիկական անձի սոցքարտի և (կամ) անձնագրի համարը, կամ իրավաբանական անձի ՀՎՀՀ-ն	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի չափը (հեկտար)	Հողի վարձավճարը (դրամ) 2014թ.
1.					
2.					
3.					
	Ընդամենը				

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
_____ շրջանի _____ համայնքի
ղեկավար _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ